կոյն անտեղի երեւաց, երբ տեսայ, որ ամբողջ գիւղը ոտքի վրայ էր: Ծերերը, պառաւները գնում էին եկեղեցին աղօթելու, իսկ երիտասարդները դէպի իրանց դաշտային աշխատութիւնները: Ես տեսայ եւ Ծովիկին, որ, սափորը ուսին՝ վերադառնում էր աղբիւրից:

— Ես կարծեցի, որ գու գնացել ես, եւ շտապեցի... — ասաց նա, կանգնելով իմ մօտ:

— Առանց քեզ մնաք բարով ասելու չէի գնալ, — պատասխանեցի ես, ինքս աւելի կարմրելով ամօթխածութիւնից, քան թէ նա:

Նա ծիծաղեց:

— Այդ ջուրը որտեղի՞ց ես բերում, — փոխեցի խօսքս:

— Հեռոից, շատ հեռոից, տե՛ս, այն բլուրի մօտից:

Նա ձեռքը մեկնեց դէպի բլուրը, որ մռայլի միջից ամենեւին չէր երեւում:

— Այս տարի, ասում են, շոգերի պատճառով, աղբիւրի ջուրը շատ պակասել է, — շարունակեց նա դատող մարդու եղանակով, — այնքան պակասել է, համարեա թէ կաթկաթում է: Պէտք է սափորը դնել լուլայի տակին եւ սպասել, երկար սպասել, մինչեւ լցոի: Այդ անզգամ աղջիկները մէկմէկու ծամէր փետում են, չեն էլ սպասում մինչեւ հերթը իրանց հասնի: Այսօր քիչ էր մնում, որ մէկի հետ կռուէինք:

Աւանց գիւղի եւ առհասարակ Վանայ շրջակայ տափարակների հողը, տոգորուած լինելով ծովային ջրով, պարունակում է իր մէջ շատ աղեր, որոնց պատճառով աղբիւրների ջրերը անախորժ համ ունեն, թէեւ ժողովուրդը գործ է ածում: Բայց լեռներից եւ բլուրներից բխող աղբիւրները սքանչելի են: Այդ էր պատճառը Ծովիկի այնքան հեռու գնալուն, որ մաքուր ջուր բերէ, մանաւանդ որ տանը հիւրեր կային:

Ծովիկը, որպէս նկատում էի, դժոարանում էր իմ մօտից հեռանալ, ծանր սափորը ուսին կանգնած էր եւ խօսում էր ու խօսում, հարցնում էր, թէ որտեղից ենք գալիս, ուր ենք գնում, հարցնում էր, թէ ես քանի քոյր ունեմ, քանի եղբայր ունեմ, հարցնում էր, թէ ես տուն վերադառնալու ժամանակ ինչ ընծաներ պիտի տանեմ քոյրերիս համար եւ այլն: Տեսնելով հետաքրքիր աղջկայ հարցերը վերջ չունեն, ասացի նրան.

— Դու շատ հեռոիցն ես գալիս, Ծովիկ, բաւական յոգնած կը լինես, գնայ տուն:

— Յոգնա՞ծ, — կրկնեց նա վիրաւորուածի նման, — ես պէտք է նորից վերադառնամ, այդ մէկ սափորը բաւական չէ: -նայ իր շալակը ցած դրեց: